Ե. Ի 1857 ամի, այն ինչ վախճանեցաւ Տ. Ներսէս կաթուղիկոսն ի Տփխիս, ի 23ն փետրվարի, Սինոդն ի մարտ ամսեանն դադարեցոյց զգործավարութիւն վանքական կառավարութեան, որոյ և ես ազատեցայ ի ձրի քարտուղարութենէն[1]. միայն Սինոդն առ ի վարձատրել զիս և զընկերակիցսն իմ ի Սինոդի, հրամայեաց հոգելոյս Պօղոս եպիսկոպոսի Մալխասեանց ժամօրհնողի տաճարի Մայր Աթոռոյս, ձեռնադրել զմեզ յաստիճան կուսակրօն քահանայութեան և վարդապետութեան, որ և ի 17 մարտի այնր 1857 ամի, ձեռնադրեաց ի վանս Ս. կուսին Գայիանեայ՝ փոխադրելով զանուն իմ ի Մեսրովբ. (իսկ զսարկաւագութեան աստիճանն արդէն դարձեալ հրամանաւ Տ. Ներսէս կաթուղիկոսի՝ յանցելումն 1856 ամի ի 16 մայիսի, ընկալեալ էաք ի Գերապատիւ Մակար Ընդեպիսկոպոս վարժապետէն մերմէ)։

Զ. Հրամանաւ Սինոդի, ի 1-ն ապրիլի 1858 ամի № 345, կարգեցայ տնտեսական մասին կառավարիչ վեհարանի (Ներսի կառավարիչ) յաւուրս գալստեան Մատթէոս կաթուղիկոսի[2]։

Է. Ի 1859 ամի Սինոդն զրութեամբ ի 10ն յունվարի № 13, կարգեաց զիս ի պաշտօն գործակալութեան Էջմիածնի գաւառի 75 գիւղօրէից (սկսեալ ի Բաշ—Ապարան զեղջէ մինչև Մարգարապատ գիւղն)։

չտեմարանապետ և այն կարգելով նրանց, և այսպէս խափանուեց Ներսէս Կաթուղիկոսի մատակարութիւնը։

[1])Ներսէս կաթուղիկոսի կոնդակի համաձայն, մի միայն ես մնացի գրագիր և եօթն տարի ձրի վարեցի վանքական կառավարութեան քարտուղարի պաշտօնը, ինչպէս գիտեն Ս. Էջմիածնի մեր ժամանակակից միաբանք։ Եւ յիրաւի, 1870 թուին կարգեցայ ես անդամ Սինոդի՝ առաջարկութեամբ հոգելոյս Տ. Գէորգ կաթուղիկոսի և վարեցի զայն պաշտօն մինչև 1887 ամն (16 տարի)։

[2])Բարեբաղդաբար 1868 թուի մարտ ամսից նոյնպէս Ներսի կառավարիչ էի (այն է վեհարանի կայից տօմարապահ և ծախուց հաշուապահ) յաւուրս գալստեան Տ. Գէորգ կաթուղիկոսի. և նոյն թուի սեպտեմբերին կարգեցայ փոխ—թեմական Երեւանայ թեմի։